«ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ» ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԻԱՄ ԱԴԱՄՅԱՆ

«Սերունդ» եզրույթը շատ հաճախ օգտագործվում է ոչ միայն առօրյա խոսքում, այլև ճանաչողական գիտության տարբեր գիտակարգերի, այդ թվում ճանաչողական լեզվաբանության ուսումնասիրություններում: Այստեղ այն մուտք է գործել միայն 20-րդ դարի երկրորդ կեսին: Առաջին հայացքից սերունդների հերթագայումն ընդամենը կենսաբանական երևույթ է: Սակայն ըստ հայտնի սոցիոլոգ Կառլ Մանհայմի՝ այն ունի պատմական կառուցվածք: Հետևաբար ներկայացվող թեման միջգիտակարգային է և կարող է ուսումնասիրության առարկա դառնալ ճանաչողական գիտության մեջ մտնող ցանկացած գիտակարգի համար՝ սոցիոլոգիա, հոգեբանություն, հասարակական այլ գիտություններ: Քանի որ լեզվական նյութի նշանագիտական վերլուծությունը մշտապես կարևորվում է լեզվաբանության և ընդհանրապես ճանաչողական գիտության կողմից, սույն վերլուծությունը կարող է որոշակի հետաքրքրություն ներկայացնել ոչ միայն ճանաչողական լեզվաբանների՝ ճանաչողագետների, այլև բուն նշանագիտությամբ, հոգեբանությամբ, սոցիոլագիայով զբաղվողների համար: Սույն հոդվածում ներկայացվող թեման մենք դիտարկում ենք ճանաչողական լեզվաբանության տեսանկյունից: Հայտնի է, որ վերջինս նպատակ ունի ներկայացնելու լեզու-ճանաչողություն աղերսները և աշխարհի լեզվական պատկերի կաղապարումը լեզվակրի գիտակցության մեջ: Այն կարևորում է լեզվի դերը աշխարհը ճանաչելու և վերաիմաստավորելու գործընթացում: Բուն լեզվաբանության համար թեման արդիական է այնքանով, որ յուրաքանչյուր դարաշրջան, հետևաբար՝ յուրաքանչյուր սերունդ ստեղծում է իրեն բնորոշ լեզվական այնպիսի մի համակարգ, որը մյուս սերունդների ներկայացուցիչների համար բավականին խորթ է, մինչև նրանց՝ այդ նոր լեզվին ծանոթանալն ու տիրապետելը:

1923 թ. գերմանացի հայտնի սոցիոլոգ Կառլ Մանհայմը հրատարակեց մի հոդված՝ «Սերունդների խնդիրը» վերնագրով, որը սկիզբ դրեց «սերունդների տեսության» ծագմանն ու զարգացմանը: «Սերունդների տեսությունը» փորձում է վեր հանել և հասկանալ միևնույն սերնդին պատկանող անհատների ընդհանրությունները՝ հիմք ընդունելով հստակ տարեթվեր: Սա հասարակական-մշակութային զարգացող երևույթ է, որը պահանջում է ավելի ընդհանրական մոտեցում, քան

անհատականն է: Մանհայմն իր հոդվածում փորձում էր բացատրել «սերունդ», «ավագ սերունդ», «սերունդների միջև բաց» (generation gap), ինչպես նաև նմանատիպ այլ հասկացություններ:

Զարգացնելով Կ. Մանհայմի գաղափարը՝ 20-րդ դարի 90-ական թվականների սկզբին երկու ամերիկացի՝ տնտեսագետ, ժողովրդագրագետ Նեիլ Հոուվը և պատմաբան, դրամատուրգ Ուիլիամ Շտրաուսը, իրարից անկախ սկսեցին ուսումնասիրել սոցիալական այնպիսի մի երևույթ, ինչպիսին է սերունդների միջև կոնֆլիկտը: Նրանց բավականին տարօրինակ էր թվում այն փաստը, որ տարբեր սերունդների պատկանող անհատները տարբեր կերպ են իրենց դրսևորում միևնույն իրավիճակում: Այլ կերպ ասած՝ այսօրվա քսանամյա երիտասարդները միևնույն իրավիճակում դրսևորում են գրեթե նույն վարքագիծը, սակայն դա նման չէ այն վարքագծին, որը նույն իրավիճակում դրսևորել են իրենց ծնողները: Հետաքրքրական է, սակայն, այն փաստը, որ այդ վարքագիծը բացահայտ նմանություններ ունի նույն իրավիճակում երիտասարդների պապերի դրսևորած վարքագծի հետ:

1991 թ. այդ գիտնականները միավորվելով հրատարակեցին «Սերունդները» գիրքը, ուր նրանք ուսումնասիրեցին և վերլուծեցին այն փոփոխությունները, որոնք տեղի են ունեցել Ամերիկայի հասարակության վարքագծում դեռևս Կոլումբոսի ժամանակաշրջանից: Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ այդ ժամանակահատվածում ակնհայտորեն հերթագայել են սերունդների չորս տարբեր հիմնատիպեր: Հեղինակները դրանք պայմանականորեն անվանեցին՝

1. իդեալիստ/մարգարե (idealist/prophet),
2. ակտիվիստ/քոչվոր (reactive/nomad),
3. հերոս/քաղաքացիական (hero/civic),
4. արվեստագետ/հարմարվող (artist/adaptive):

Այս չորս տիպերի հերթափոխը նրանք նմանեցրին տարվա եղանակների հերթագայմանը և համապատասխանաբար դրանք անվանեցին՝ «գարուն», «ամառ», «աշուն», «ձմեռ»: Հետագայում արդեն հենց այդ հիմքով գրված «Չորրորդ շրջադարձ» գիրքը ծնունդ տվեց հեղինակների մշակած հայտնի «սերունդների տեսությանը»: Տեսության հիմքում ընկած է այն գաղափարը, որ անհատի վարքագիծը մեծապես կախված է այն հանգամանքից, թե որտեղ է նա ապրել և մեծացել մինչև իր տասնչորս տարին լրանալը, քանի որ մարդու արժեհամակարգը ձևավորվում է մինչև այդ տարիքը և ուղեկցում նրան ամբողջ կյանքում:

Այսօր աշխարհում միաժամանակ գոյակցում են սերունդների վեց հերթագայման ներկայացուցիչներ, իսկ ամենամեծ և ամենափոքր տարիքի սերունդների ներկայացուցիչները գրեթե պատճենում են միմյանց վարքագծերը, սակայն ոչ լեզուն:

Ամենամեծահասակների սերունդը համարվում է ***Հերոսների*** («քաղաքացիական») սերունդը՝ ծնված «աշուն» համարվող տարիներին,

այն է՝ 1901-1924 թթ.: Նրանց արժեքները ձևավորվել են մինչև 30-ական թթ.՝ Մեծ դեպրեսիայի տարիներին: Այս սերունդը հեղինակները պայմանականորեն կոչել են «G.I.» (General Issue) կամ «հաղթանակածների սերունդ», իսկ 1998 թ. ամերիկացի հայտնի լրագրող Թոմ Բրոքաուն այս սերունդն անվանել է «Ամենահզոր սերունդ» ("The Greatest Generation")[1]: Երկրորդ համաշխարհայինի տարիներին հիմնականում հենց այս սերնդի ներկայացուցիչներն են մասնակցել պատերազմին, որով էլ պայմանավորված են սույն սերնդին տրված բոլոր անվանումները: 1901-1924 թթ. ծնված Հերոսները բավականին հայրենասեր են, խոսքում նախընտրում են կիրառել «մենք» դերանունը, հաղորդակցության ժամանակ մշտապես պահանջում են հարգանք:

Արվեստագետների սերունդը՝ ծնված 1925-1942 թթ. («ձմեռ», «հարմարվող»), ստացել է *«լռակյաց»* սերունդ անվանումը: Լռակյացների վարքագիծը Հերոսների վարքագծի ճիշտ հակառակն է, քանի որ նրանք ոչ թե զբաղվում էին քաղաքացիական ակտիվ գործունեությամբ, այլ սեփական կարիերայի բարելավմամբ: Բացի այդ, պատերազմական տարիներին ծնելիության մակարդակն ընկել էր, և այս սերնդի ներկայացուցիչները համեմատաբար փոքրաթիվ են: Այս սերնդի արվեստագետների խոսքն ունի դիսկրետ/անջատ բնույթ. այն ավարտուն չէ: Բավականին դանդաղախոս են, կենտրոնանում են ոչ թե ժեստերի լեզվի, այլ բուն բառային միավորների վրա:

Իդեալիստների կամ *Բեբի-բումեր* կոչվող սերունդը («գարուն», «մարգարե»՝ 1943-1960 թթ.) իր անվանումն ստացել է ոչ միայն ի պատիվ ծնելիության մակարդակի աճի, այլև տնտեսության, կրթության և գիտության որակի բարելավման կամ այլ կերպ ասած՝ «բումի»՝ պատերազմական ծանր տարիներից հետո[2]: Ներկայումս այս սերնդի ներկայացուցիչները իշխում են ղեկավար մարմիններում՝ ինչպես մասնավոր, այնպես էլ հանրային տիրույթներում: Նրանք ունեն աշխատանքային բարձր կարգապահություն, վերլուծական միտք, հավատում են իշխանությանը և ընդունում առաջնորդությունն ու վերահսկումը: Նախընտրում են միայնակ աշխատանքը թիմայինից: Նրանց բնավորության առանցքում հաղթողի հոգեբանությունն է, իսկ տրամադրությունը խիստ տարբերվում է G.I. սերնդի և արմատապես՝ «լռակյացների» տրամադրությունից: Բեբի-բումերների խոսքը բավականին երկարաշունչ է, նրանք նախընտրում են դեմառդեմ հաղորդակցությունը, դժվարությամբ են ընկալում տեխնոլոգիական առաջընթացով պայմանավորված լեզվական նորաբանություններն ու եզրույթները: Այս սերնդի ներկայացուցիչները բավականին պահպանողական են իրենց խոսքում, չեն սիրում կիրառել վիրավորական արտահայտություններ կամ

[1] Տե՛ս **Brokaw T.,** The Greatest Generation, New York, 1998, էջ 7:

[2] Տե՛ս **Howe N., Strauss W.**, Generations: The History of America's Future, 1584 to 2069, New York, 1991, էջ 304:

բառեր, մեծ նշանակություն են տալիս ժեստերի լեզվին, եսակենտրոն են. խոսքում բավականին հաճախ կիրառում են «ես» դերանունը:

Ակտիվիստների սերնդին այլ կերպ անվանում են X («անհայտ սերունդ») կամ *«անկախներ»*՝ ծնված 1961-1981 թթ. («ամառ», «քոչվոր»): Նրանք նախորդ սերնդի էներգիայի և եռանդի արդյունքն են և համարվում են հոռետես, ճնշված և օտարված: Ի դեպ, հեղինակների կողմից նրանց տրված տառային անվանումը վերաբերում է ժամանակաշրջանի երիտասարդության բնավորության հենց այս երեք գծերին: Բացի այդ՝ Ն. Հոուվը նշել է. «Իրենց ծննդյան պահից շուրջ 30 տարի անց նրանք չունեին անվանում: Կարծում եմ՝ այս անվանումը պատշաճ է»[3]: Այս սերնդի ներկայացուցիչներն այժմ միջին տարիքում են և մուտք են գործում կյանքի իշխանության, ուժի փուլ: Նրանք, որպես կանոն, բավականին գիտակ են իրենց ասպարեզներում և ի հեճուկս Բեբի-բումերների՝ նախընտրում են թիմային աշխատանքը: X սերնդի ներկայացուցիչները իրենց խոսքում հստակ են, լակոնիկ, խուսափում են բարդ շարադասական կառույցներ կիրառելուց, ինչպես նաև խոսքում չեն օգտագործում նորաձև արտահայտություններ և բառեր (модные слова/ buzzwords):

Հաջորդիվ կրկին ***Հերոսների*** սերունդն է, որին նաև կոչում են Y կամ «քաղաքացիական» սերունդ՝ ծնված 1982-2004 թթ.: Ի դեպ՝ Y տառային անվանումը նրանք ստացել են պայմանականորեն՝ նախորդ՝ X սերնդից տարբերվելու նպատակով: Նրանք ստացել են նաև «Հազարամյակի սերունդ» անվանումը, քանի որ նրա ներկայացուցիչներն իրենց արժեհամակարգը ձևավորել են արդեն նոր հազարամյակի սկզբներին[4]: Այս սերունդն այժմ մուտք է գործում ակտիվ կյանքի փուլ: Նրանք սովորաբար բնութագրվում են որպես միջազգային առաջնորդներ: Նախընտրում են թիմային աշխատանքը, նորը սովորելու հակում ունեն: Ինչպես և ենթադրվում էր, այս սերնդի ներկայացուցիչները բավականին նման են G.I. սերնդի ներկայացուցիչներին իրենց վարքագծով, սակայն ոչ լեզվով: Նրանք ծնվել են համացանցի դարաշրջանում և բավականին արդյունավետ են հաղորդակցվում սոցիալական կայքերի, էլեկտրոնային փոստերի կամ տեքստային հաղորդագրությունների միջոցով՝ կիրառելով համապատասխան լեզու և տերմինաբանություն: Իրենց խոսքում քաղաքավարի են, նախընտրում են կիրառել «գործընթաց» արտահայտող բայեր (action verbs/глаголы действия), սովոր չեն դեմառդեմ հաղորդակցմանը:

Շրջանը եզրափակում է Z կոչվող ***Արվեստագետների*** սերունդը՝ ծնված 2005 թ.-ից հետո («ձմեռ», «հարմարվող»), որը դեռ նոր է սկսում

---

[3] **Klara R.**, Five Reasons Marketers Have Largely Overlooked Generation X, New York, 2016, p. 42.

[4] Տե՛ս **Benckendorff P., Moscardo G., Pendergast D.**, Tourism and Generation Y, UK, 2010, էջ 115:

ձևավորել իր արժեհամակարգը: Ըստ տրամաբանության՝ X և Y սերունդներից հետո այս մեկը պիտի կոչվեր Z: Դժվար է այժմ նրանց մասին ավելի որոշակի խոսել, սակայն պատկերացնել, թե ինչպիսին կլինեն, միանգամայն հնարավոր է: Z կոչվող սերունդը համարվում է զգացմունքային ու անվճռական և իր նախորդ սերնդի ճիշտ հակառակն է իր նախաձեռնողականությամբ և առաջնորդությամբ: «Z սերունդ» տերմինը համապատասխանում է «թվային մարդ» հասկացությանը[5]: Նրանց անվանում են թվային սերունդ, քանի որ նրա ներկայացուցիչներն ակտիվորեն օգտագործում են պլանշետներ, թաբլեթներ և ապրում են 3D իրականության մեջ: Բնականաբար, Z սերնդի կողմից օգտագործվող լեզուն արմատապես կտարբերվի նախորդ սերունդներին բնորոշ լեզվից, քանի որ միջավայրը, որում Արվեստագետների այս սերունդը ծնվել և մեծացել է, բնորոշվում է տեխնոլոգիական առաջընթացով (տե՛ս աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Հիմնատիպային անվանում	Ծննդյան տարեթվեր	Տառային անվանում	Տարվա եղանակ	Այլ անվանումներ
Հերոսներ	1901-1924	«G.I.» (General Issue)	Աշուն	Քաղաքացիական սերունդ, Հաղթանակածներ, Ամենահզոր սերունդ
Արվեստագետներ	1925-1942	-	Ձմեռ	Հարմարվողներ, Լռակյացներ
Իդեալիստներ	1943-1960	-	Գարուն	Բեբի-բումեր, Մարգարեներ
Ակտիվիստներ	1961-1981	X («անհայտ սերունդ»)	Ամառ	Անկախներ, Քոչվորներ
Հերոսներ	1982-2004	Y	Աշուն	Հազարամյակի սերունդ, Քաղաքացիական սերունդ
Արվեստագետներ	2005-	Z	Ձմեռ	Հարմարվողներ, Լռակյացներ, Թվային սերունդ

Զարմանալի չէ, որ սերունդների միջև առկա են լեզվական տարբերություններ: Յուրաքանչյուր սերունդ զարգացնում է իր սեփական լեզուն՝ բնորոշ իր ինքնությանը՝ այսպիսով առանձնանալով մյուսներից իրեն հատուկ բառապաշարով: Վերլուծելով վերոնշյալ վեց սերունդներին տրված անվանումները՝ կարելի է նկատել, որ բացի իրենց անփո-

[5] Տե՛ս **Schmidt L., Hawkins P.**, Children of the Tech Revolution, Sydney, 2008, էջ 14:

փոխ հիմնատիպային անվանումներից՝ սերունդներն ստացել են նաև հավելյալ փոփոխական անվանումներ՝ պայմանավորված տվյալ ժամանակաշրջանով և պատմական իրադարձություններով: Օրինակ՝ Հերոսների սերունդը՝ ծնված 1901-1924 թթ., ստացել է նաև «հաղթանակածների սերունդ» անվանումը՝ համաշխարհային պատերազմում ցուցաբերած ակտիվ մասնակցության համար, իսկ 1982-2004 թթ. ծնված Հերոսները ստացել են պայմանական Y և Հազարամյակի սերունդ անվանումները: Արվեստագետների 1925-1942 թթ. սերնդին տրվել է «լռակյաց» անվանումը, իսկ 2005 թ.-ից հետո ծնված Արվեստագետները պայմանականորեն կոչվում են Z սերունդ: Բնականաբար, սերունդներին տրված հավելյալ անվանումներն արտացոլում են տվյալ ժամանակաշրջանի առանձնահատկությունները: Հավանականությունը մեծ է, որ վերջին՝ X, Y, Z կոչվող սերունդները ժամանակի ընթացքում կկորցնեն իրենց տառային անվանումները՝ ստանալով նորը՝ հատուկ իրենց արդեն պատմություն դարձած ժամանակաշրջանին:

Հայտնի է, որ հասարակական կյանքում տեղի ունեցող փոփոխությունների նկատմամբ լեզվի կառուցվածքային բաղադրիչներից ամենից զգայունը բառապաշարն է: Ինչպես գիտենք՝ լեզվի բառապաշարի ընդլայնումը, նոր հասկացությունների ստեղծումն ու ներմուծումը պայմանավորված են ինչպես տվյալ լեզվի զարգացման ներքին օրինաչափություններով, այնպես էլ արտալեզվական մի շարք հանգամանքներով, որոնք այս կամ այն ձևով նպաստում են գիտության և մշակույթի առաջընթացին, իսկ երկրում տիրող սոցիալ-տնտեսական, քաղաքական, մշակութային իրավիճակը, գիտության և տեխնիկայի հետ կապված փոփոխությունները առաջին հերթին իրենց արտահայտությունը գտնում են բառապաշարում: Ակնհայտ է, որ ամենաերիտասարդ սերնդի լեզուն, նրա կողմից կիրառվող տերմինաբանությունը հիմնովին տարբերվում են ավելի մեծահասակ սերունդների ներկայացուցիչների լեզվից: Այս սերունդը մշտապես ապրել և ապրում է բջջային հեռախոսների, համացանցի և թվային տեխնոլոգիաների իրականության մեջ: Տեքստային հաղորդագրությունը եկել է փոխարինելու հեռախոսային խոսակցությանը, իսկ վերջինս ավելի ավագ սերունդների հաղորդակցման նախընտրելի ձևն էր: Վերջին տասնամյակում տեխնոլոգիական կտրուկ փոփոխությունները ստեղծել են հաղորդակցական հսկայական տարբերություններ, ինչի հետևանքով ստեղծվել են լեզվական մի շարք նորաբանություններ, 2005 թ.-ից հետո ծնված Արվեստագետները լայնորեն կիրառում են սոցիալական մի շարք կայքեր, որոնք այս և արդեն հաջորդ սերունդների ինչպես առօրյա, այնպես էլ աշխատանքային գործիքներն են, և դրանց անտեսումը այնքան էլ ճիշտ չի լինի: Արդյո՞ք Բեբի-բումերները կամ X և Y սերունդների ներկայացուցիչները ի վիճակի կլինեն հասկանալու Z կոչվող Արվեստագետների սերնդին: Կամ արդյո՞ք «սերնդի պահ» եզրույթը, որը սահմանվում է

որպես մի իրողություն, երբ անհատը ծանոթ չէ մեկ այլ սերնդի ներկայացուցչի կողմից կիրառված եզրին, կունենա լայն կիրառություն: Այս փաստը կարծես մի մարտահրավեր է, սակայն այն նաև հնարավորություններ է ստեղծում հաղորդակցման տարատեսակ ձևերի համատարած կիրառման համար:

Ամփոփելով կարելի է փաստել, որ «սերունդների տեսության» լեզվականացումը ժամանակի ընթացքում կհամալրի լեզուների բառային ֆոնդը ոչ միայն նոր բառերի, այլև առաջին հերթին նոր հասկացությունների ներմուծմամբ:

Բանալի բառեր – *«Սերունդների տեսություն», տարիք, արժեհամակարգ, լեզվականացում, լեզվանշանագիտական վերլուծություն, նորաբանություն*

МАРИАМ АДАМЯН – *Семантический анализ терминов «теории поколений».* – Теория поколений, разработанная Уильямом Штраусом и Нилом Хоувом, описывает повторяющиеся поколенческие циклы в истории США. В её основе лежит положение, согласно которому системы ценностей у людей, выросших в разные исторические периоды, различаются. Основы этой теории, изложенные учёными в книге «Поколения» (1991), сделали популярной идею о том, что люди определённой возрастной группы склонны разделять особый набор убеждений, отношений, ценностей и моделей поведения, т. к. они росли в одинаковых исторических условиях. Следовательно, эти ценности формируются не только семейным воспитанием, но и под влиянием общественных событий, среди которых человек находится в период взросления. Особую значимость это приобретает в контексте когнитивной науки, в частности когнитивной лингвистики, поскольку лингвосемиотический анализ наименований возрастных групп, их вербализация вносит ясность в понимание базовых положений теории.

Ключевые слова: *“теория поколений”, возраст, система ценностей, вербализация, лингвосемиотический анализ, неологии*

MARIAM ADAMYAN – *Semantic Analysis of the Terms of Generational Theory.* – The generational theory, created by William Strauss and Neil Howe, describes a theorized recurring generation cycle in American history. The theory discusses different values of people who grew up in different historical periods. The basis of the theory was introduced in the book named "Generations" (1991), which helped popularize the idea that people of a certain age group tend to share a particular set of beliefs, attitudes, values, and behaviors, as they grew under the same historical conditions. Hence, human values are formed not only because of upbringing but also under the influence of social facts, the entire context, in which the person grows up. The aforementioned is highly important in the context of cognitive science, especially in cognitive linguistics, since linguosemiotic analysis of the age groups, their verbalization, brings some clarity on the basis of the theory.

Key words: *"Generational theory", age, system of values, verbalization, linguosemiotic analysis, neology*